

ՀԱՅ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՀԵՏՔԵՐԸ ՀԱՐԱՎԱՐԵՎՄՏՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(Քրդական որոշ ցեղամուճների և ցեղերի ծագման հարցի շուրջ)

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

Հին և միջնադարյան Հայոց պետականության պատմությունն ամբողջությամբ վերցրած, ըստ էության, առանձին նախարարական տները, ինչպես և արքայական ու հոգևորական դահատոհմերի, նրանց՝ արտաքին ուժերի և միմյանց միջև եղած փոխհարաբերությունների պատմությունն է: Այդ ողջ ժամանակահատվածում Հայ ժողովրդի ներսում ընթացող էթնիկ պրոցեսները ոչ թե անփոփոխ վիճակում են գտնվել, այլ մշտապես եղել են դինամիկ զարգացման մեջ:

Ինչպես դիպուկ նկատել է «Հայ ժողովրդագիտության ռահվիրա», լուսապսակ վարդապետ Գարեգին Սրվանձտյանցը, «Հայտնի է թե Հայկազանց ժամանակ քանանացիք, Արծրունի ասորիք, Հրեից գաղթականք, Մարաց մեծ դերեվարությունը, Աժդահակյան ազգ և տոհմն, Գողթնյաց վիչապաղունք, վեհազն Արշակունիք և այլն: Ասոնք Հայտնի են. որքա՞ն ևս առավել պարսկական, հունական, ալանական, հյուսիսային և հարավային ազգաց հատվածք և պատվաստք եկած հարած են՝ ի մեզ. է որ իրենց ազգային հատկությունք և պաշտոնք ընդ երկար սլահած են, է որ հեղափոխված են՝ ի մեզ:

Ըստ այդմ է նաև ամեն ազգաց գոյություն և քաղաքականության կենաց պատմությունն ու բնությունը»¹:

Սնգամ եթե Գ. Սրվանձտյանցը փոքր-ինչ չափազանցրել է եկամուտ տարրի գերը, միևնույն է, նրա մոտեցումը միանգամայն ընդունելի է. հիրավի, առանց նշված գործոնների առկայության՝ ոչ մի ազգ աշխարհում չի կարող երկար գոյատևել և ստեղծել հղոր սլետություն: Սակայն հետագա դարերում՝ պետականության րացակայության պայմաններում, հայ իշխանական տներն աստիճանաբար ջլատվեցին և գազարեցին գոյություն ունենալ: Եթե Հայաստանի հյուսիսարևելյան մասում, շնորհիվ մի շարք նպաստող հանգամանքների, Հայ նախարարները գոյատևեցին բավական երկար՝ ժամանակ (դրանցից էին Զաքարյանները, Օրբելյանները, Պահլավունիները, Պռոշյանները և այլն), ապա հարավային Հայաստանում նախարարական տոհմերի մասին գրեթե մեկ հաղարամյակ արդեն ոչ մի ուղղակի վկայություն չկա:

Իշխանական տների տեղահանումը և դրանով՝ գարերի ընթացքում ստեղծված ու սրբագործված ավանգույթների եղծումը սկսվեց Բյուզանդիայի անկման նախօրերին: Այս քաղաքականությանը կայսրությունը

¹ Գ. Սրվանձտյանց. Երկեր. հ. I, Երևան, 1978, էջ 174-175:

բնական սլաանեչ էր կառուցում Եվրատի աջափնյակում՝ նորախուժ թուրք-սելջուկների դեմ, միևնույն ժամանակ դատարկվում էին Եփրատից արևելք գտնվող հնուց հայաստոս հոծ բնակչությունը ունեցող տարածքները: Որոշ տոհմեր, իհարկե, մնացին իրենց նախկին բնակություն վայրերում (օրինակ՝ Մամիկոնյանները) կամ դրանցից ոչ հեռու՝ Դա, սակայն, նրանց կյանքը երկարաձգեց ընդամենը մեկ-երկու դարով:

Այդուհանդերձ, իշխանական տոհմերի վերացումը հարավարևմտյան Հայաստանում անհետ չընթացավ. այսօր էլ, մնացուկների և վերապրուկների տեսքով, նախարարական տները վկայում են իրենց վաղեմի գոյությունը մասին: Խոսելով մնացուկների մասին՝ նկատի ունենք, նախ, իշխանական տոհմանունների առկայությունը. դրանք հաճախ վերաիմաստավորվել են որպես տեղանուններ կամ տարածքի բնակչության բնորոշումներ: Որոշ դեպքերում էլ երևում է նախարարական տների հետ կապված սլաուկերացումների և ավանդույթների հարատևումը կամ փոխակերպումը պատմական և էթնո-մշակութային նոր միջավայրում: Ստորև, որպես նախնական դիտարկումներ, որոնք հետադադրում կարող են լրացվել նորանոր փաստերով, ներկայացնում ենք ուշագրավ մի քանի օրինակ:

Մանդակունիներն, ըստ Ասողիկ սլամիչի, իշխում էին Տարոնին հարևան Արշամունիք գավառում. այստեղ հայտնի է Բյուրակն (Սրմանց) լեռը, որտեղ, իբր, գտնվել է դրախտը: Ենթադրվում է, որ Արշամունիք կամ Աշմունիք / Աշունիք գավառն իր անունը ստացել է Ծովքի Արշամ թագավորի անունից, որը հիմնադրել էր Արշամաշատ (Մամոսատ) քաղաքը Բալահովիտ գավառում, կամ էլ Եփրատի հովտում գոյություն է ունեցել Արշամունյաց իշխանական տոհմը, որի ներկայացուցիչները համեմատաբար երկար գոյատևել են Բյուրակնի ստորոտում³: Ամենայն հավանականությամբ, Արշամունիները եղել են Մանդակունիների մի ճյուղը կամ հետագայում մերվել են այդ նախարարական տան կազմում:

Պատմահայր Մովսես Խորենացու համաձայն՝ Մանդակունյաց տոհմի նախահայրն էր Միանդակը, որը հայոց արքայի կողմից մ.թ.ա. 11 դ. նշանակվեց գավառի որսապահ⁴: Ըստ Հակոբ Կարենցու վկայության՝ Տարոնին հարևան Հաշտյանքի (Ճապաղջրի) մոտ գտնվող Կինճ/Գինճ գավառակը նախկինում կոչվել է Մանդակունեաց երկիր, այն միջնադարյան մի ժամանակադրություն մեջ անվանված է Մանդակունեաց երկիր, կոչվել է նաև

³ Ն. Ա. դ. ո. ն. ց. Քրդերի ներթափանցումը Հայաստան. «Իրան-նամէ», 1995, № 3, էջ 7:
⁴ Ն. Ա. դ. ո. ն. ց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Երևան, 1987, էջ 28, 345-346: Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Ս տ. Տ. Մ ե լ ի ք - Բ ա ի շ յ ա ն, Հ. Խ. Բ ա ռ - ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՀՀՇՏԲ). 1-5, 1986-2001, հ. 1, Երևան, էջ 477, Գ. Ս ը վ ա ն ձ ա յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 64: Ըստ Փ. Բուզանդի՝ Արշամունյաց գավառից էր Մրջունիկ երեցը, որը թունավորեց Արշակ II (353-368) արքայի երկրորդ կնոջը և որպես փոխհատուցում Փառասոսեմ թագուհուց ստացավ իր հայրենի Գոմիունք գյուղը Արշամունիքում [Փառասոսի Բիւզանդացոյ Պատմութիւն հայոց (աշխատասիրությունը Ստ. Մայրապյանցի). Երևան, 1987, IV, ԺԵ, էջ 192-194]: Բացի այդ, նույն գավառում հայտնի էին նաև Շիրմաց և Երկա բնակավայրերը [Նաղարայ Փարսեղոյ Պատմութիւն հայոց (աշխատասիրությունը Բ. Ուլուբաբյանի), Երևան, 1982, III, 2Բ, էջ 362]:
⁵ Մ ո վ ս ի ս ի ն ո ռ ե ն ց ւ ո յ Պատմութիւն հայոց (աշխատասիրությունը Ստ. Մայրապյանցի) [այսուհետև՝ Խորենացի]. Երևան, 1981, II, Ը, էջ 131:

Մանդակունի(ք)⁵: Այս դավառը գտնվել է Տարոնի և Հաշտյանքի սահմանին՝ Արշամունիքից հարավ, և նրա անվանումն իսկ (կինճ՝ վայրի խոզ, վարազ), ակնարկում է որսատեղի առկայությունը նշված տարածքում: Խորենացին, ցավոք, չի հայտնում, թե որ դավառն էր տրվել Միանդակին՝ Արշամունիքը, թե Կինճը, բայց գրում է, որ Միանդակից «սերեցին Մանդակունիները»:

XVII դ. Կինճ դավառակն ընդարձակվեց և կազմեց Գենջ / Գինջ մուսուլմանական հյուսիսարևմտյան թուրքերը՝ իր մեջ ներառելով Արածանի գետի միջին հոսանքի շրջանը՝ Կինճ, Ճապաղը, Խուլփի, Սասուն դավառակները, և կոչվելով նաև Արշեն / Արշու⁶:

Խորենացին, հավանաբար հետևելով ժողովրդական ստուգաբանությանը, ըստ որի՝ Միանդակ անունը պետք է բացատրվեր *մի՛-անդ-ակ, այդ նահապետին կոչում է «անդառնալի Միանդակ»⁷: Որքան մեզ հայտնի է, Միանդակ անձնանունն այլուր չի հանդիպում, և շատ հավանական է, որ այն սլավոնական դիցանուն լինի: Ըստ Վ. Ոսկանյանի՝ Մանդակունի տոհմանունը հանդում է հայ. մանդակ բառին: Այս բույսը (մանդակ, մանդիկ, օձտակ), որը հերկայումս էլ լայնորեն կիրառվում է սննդում, պաշտամունքային մեծ լիցք է ունեցել, թեև անցյալում նույն անվամբ կարող էր նաև այլ բույս կոչվել: Նույն արմատով կազմված բուսանունն առկա է քրդական մանդիկ (mandikī, mandkī) ցեղանվան մեջ⁸:

Ինչ վերաբերում է քրդ. mandak / mandik «մանդակ» բառին, ապա այն, ըստ երևույթին, վոխառյալ է հայերենից, քանի որ դրա արմատն արևմտաիրանական այլ լեզուներում բացակայում է⁹, սակայն այն համարվում է միջերկրածովյան կամ առաջավորասիական արեալային մի ձևույթ (*ma[n]t-/ma[n]d-), որից կազմված են վայրի բուսանուններ տարբեր լեզուներում՝ հայ. մանդակ «մի տեսակ տունկ», մանտուկ «չուչան, բանջար»¹⁰, մանդակ 'Ch. Bulbosum L.', օս. mæntæg / mont, սլավ. mant, բալկար. mant «լուռակ ուտելի» 'Lappula echinata (?)', հուն. μίνθη, լատ. mentha, անգլոսաքս. minte, ռուս. МЯТА «դաղձ» և այլն¹¹. Թերևս, այս նույն շարքին պետք է դասել նաև հայ. ման(դ)րագոր «մի տեսակ թմրե-

⁵ ՀՀՇՏԲ. հ. I, էջ 866, հ. III, էջ 685: Մանր ժամանակագրություններ (կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան). XIII-XVIII դդ., հ. II, Երևան, 1956, էջ 553:

⁶ ՀՀՇՏԲ. հ. I, էջ 835-836:

⁷ Խ ո ը Կ Ե Ն Վ Յ Ի, II, Ը, էջ 131:

⁸ Վ. Ոսկանյան. Բույսերի և կենդանիների անվանումները իրանական ցեղանուններում. «Իրան-նամէ», 1997, № 4-6, էջ 25. Ընդհանրապես, բուսանունների վերածումը ցեղանունների հնում բավական տարածված երևույթ է եղել, ինչը երևում է նաև ժամանակակից ցեղային կառուցվածքը պահպանած որոշ ժողովուրդների մեջ: Հենց քրդական ցեղանունների շարքում հանդիպում են այնպիսիները, որոնք կազմված են «սլրբի», «սոխ», «ծիլ», «դամբուլ» նշանակող արմատներից (sīrkī, pīwāzī, zīlan, dōmbulī):

⁹ Г. С. А с а т р я н. Контакты армянского с новоиранскими языками (дис. на соискание ученой степени доктора филол. наук). Ереван, 1991, с. 264-265; Գ. Ա ս ա տ ր յ ա ն. Հայ-օսականք. «Իրան-նամէ», 2000, № 35, էջ 66:

¹⁰ Հ. Ա ճ ա յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 252. Ա. Ս և լ ք ի ա ս յ ա ն. Հայոց լեզվի հոմանիշների բառարան. Երևան, 1967, էջ 437:

¹¹ В. И. А б а е в. Историко-этимологический словарь осетинского языка. Т. II, М.-Л., 1973, с. 94 ; М. Ф а с м е р. Этимологический словарь русского языка. Т. III, М., 1987, с. 31.

ցուցիչ բույս՝ *atropa mandragora*», որը համեմատվում է հուն. *μανδραγόρας*, ասոր. *mandragoron* համանիշ ձևերի հետ¹²:

Նույն արմատի ոչ-ոնդայնացված տարբերակի կրկնությամբ հն առաջացել հայ. մատուտակ (*մատատուկ)՝ *Glicyrrhiza L.* և օս. *mætataqk*՝ *Poa pratensis* (?)՝ բառերը, որոնք երկուսն էլ սննդում օգտագործվող վայրի բույսերի անվանումներ են¹³, ինչպես և, ըստ երևույթին, հայ. մատխուեղ > վրաց. *mat'it'ela* բուսանունը: Գ. Ջահուկյանը վերջին երկու բառերը՝ մատուտակ և մատխուեղ, մատաղ «մատղաչ, փավուկ» բառի հետ բխեցնում է Հ.-ե. **mad-* արմատից, որի քմայնացված **mad'* տարբերակից է առաջացել, ըստ նրա, հայ. մաճար (*մաճ-ար) «քսուցու, լսակակութ դինի» բառը¹⁴: Հաշվի առնելով այս օրինակները՝ **ma[n]d-* (*ma[n]t-*) արմատը, ըստ ամենայնի, կարելի է կապել Հ.-ե. **mēdhu-* «քաղցր», «մեղր, մեղրաջուր», «ծխալան ոգելից խմիչք» արմատին. պատահական չէ, որ մատուտակը բարբառներում կոչվում է հենց քաղցրամարուկս, քաղցրարմատ, քաղցր լիան¹⁵:

Իմիջիայլոց, Ն. Ադոնյան այս նույն **ma[n]t-/ma[n]d-* արմատից է բխեցնում նաև Ամատունի նախարարական տոհմանունը, որի տիրույթները գտնվում էին Արտազ դավառում, իսկ հետագայում՝ նաև Օշականում¹⁶: Պատմահոր վիկայության համաձայն՝ Ամատունիների կամ «Մանուկանների» նախահայրն է եղել ոմն Մանուկ, և այս տոհմը Մեծ Հայք է եկել Արտաշես թագավորի օրոք, «նրանք հաղթանդամ, վայելչակազմ և ուժեղ մարդիկ են, ամեն բանում պատշաճ: Սրանք տարված են եղել Արշակի ձեռքով, որ պարթևական ցեղից առաջինը թագավոր դարձավ, և առաջադիմելով Արյաց աշխարհում էլ պատվի հասան Ահմատանի [– Համադան] կողմերը»¹⁷:

Հայ իշխանական տների հմուտ գիտակ Ն. Ադոնյանը Մանուկունիներին և Ամատունիներին կապում է անտիկ հեղինակների Մատիենե (*Ματιυνη*) երկրի հետ, որը Հերոդոտոսի կողմից տեղադրվում է Ուրմիա լճից հարավ-արևմուտք՝ Հայաստանի և Խուստանի (= Կիսիա) միջև¹⁸: Մատիենե երկրում բնակվող մատիենների անունով, ըստ Ստրաբոնի, Ուրմիա լիճը կոչվում էր Մանտիանե (*Μαντιανη*)¹⁹, որն արդեն, ինչպես տեսնում ենք,

¹² H. H u b s c h m a n n. Armenische Grammatik. Leipzig, 1897, S. 363.

¹³ Գ. Ա ս ա տ ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 66: Հետագայում այս արմատը բաղաբովել է հայ. մատն մարմնի մասի անվան հետ, որից և ունենք բազմաթիվ բուսանուններ հայ. մասն «չիչխան». մատնախոտ, մատնածողիկ, մատնեսունկ, մատնոցուկ, մատնետակ, մատնիկ, մատնուկ, մատնունի, մատուկ, հարսն-մատն և այլն (տե՛ս Ա. Ս ու Ք ի ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 440–441):

¹⁴ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախադրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 136, 170, 211: Հայ. մատուղ բառին համապատասխանում է խեթա-լուվիերեն ռնդայնացված տարբերակը՝ ^{SISKUK} *mantalli-* «ղոհատեսակ», որը փոխառյալ է դրվում հայերենից (նույն տեղում, էջ 320):

¹⁵ Ա. Ս ու Ք ի ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 441:

¹⁶ Ն. Ա դ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 466:

¹⁷ Խ ո Ր Ե ն ա Յ ի, II, Ծ է, էջ 225:

¹⁸ Ն. Ա դ ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 465–466: Հ հ Ր ո դ ո ա ս ս. Պատմություն ինը գրքից (աշխատասիրությամբ Մ. Կրկյաշարյանի). Երևան, 1986, V, 49, էջ 305:

¹⁹ С т р а б о н. География (перевод, статья и комментарии Г. А. Стратановского). Л., 1964, XI, 14, 8, с. 498.

նույն անվան ռեգայնացված տարբերակն է: Աշխարհագրագետ Ստրաբոնի հաղորդմամբ՝ Մատիենեում խաղողի մի որթից ստացվում է մոտ 40 լիտր գինի, իսկ մեղուները փեթակ են շինում հենց ծառերին, և մեղրը ցած է ծորում տերևների վրայից, նման երևույթ, ըստ նրա, լինում է միայն Հայաստանի Շակաչենում և Արաքսենեում, ինչպես և Վրկանից երկրում²⁰: Մատիենե երկրի այդ հատկությունը հիմք է ծառայել նրա անվանումը կապելու «գինի» և «մեղր» նշանակող արմատի հետ²¹: Եթե Ματιουη երկրանունն, իրոք, առնչվի հ.-ե. *mad- կամ *medhu- «քաղցր, մեղր» արմատին, ապա խիստ գայթակղիչ է նրա կազմությունը համեմատել Ադուանք աշխարհի ժողովրդական ստուգաբանության հետ, որը, ըստ Խորենացու, կապվում էր հայ. արու «քաղցր» բառի հետ²²:

Մատիենեների էթնիկ պատկանելության մասին մինչ օրս շատ քիչ բան է հայտնի: Դասական Մատիենե երկրի տարածքում դեռ մ.թ.ա. III հազարամյակից հիշատակվում են լեռնական բարբարոս ցեղեր, որոնք հաճախ ավերիչ արշավանքներ էին կազմակերպում դեպի հարևան երկրներ: Ասորեստանյան արքաների արձանագրություններում այդ ցեղերը կոչվում են *umman manda*, այսինքն՝ «մանդա-ի զորքեր»։ ամենայն հավանականությամբ, նրանց հետ է առնչվում Մատոնու կամ Մանդու լեռնաշղթայի անվանումը, որը գտնվել է Վանա լճից հարավ-արևմուտք՝ Դիրրա և Արբակու (– Ադրակ ?) «երկրների» միջև, և հիշատակվում է Ասորեստանի Աշուրնափրպալ II արքայի արձանագրության մեջ²³: Հետագայում, սակայն, *umman manda* անվան տակ, օրինակ, Ասարհադոնի տարբերություններում (մ.թ.ա. VII դ.) հանդես են գալիս քոչվոր գամիրները (կիմերներ) և սկյութները, այսպես՝ գամիրների առաջնորդ Տեուշպան միաթամանակ կոչվում է և՛ *gi-mir-ra-a* (կիմերացի), և՛ *umman(EREN²⁴)-man-da* (մանդա-ի զորքերից), իսկ մեկ այլ գամիրական առաջնորդ Դուգդամին Աշուրբանասպալի արձանագրության մեջ հորջորջվում է «ուժման մանդայի արքա»²⁴:

Ինչպես գիտենք, գամիրները հնգեվրոպախոս ցեղեր էին, առավել մեծ հավանականությամբ՝ ոչ իրանալեզու: Նրանց հիմնական հենակետերը, որտեղից հարվածներ էին հասցնում հարավային երկրներին, երկուսն էին՝ Ուրմիա լճի շրջակայքը՝ Մանա երկրի հարևանությունում, և Գամիրքը (Փոքր Հայքը): Հետաքրքիր է, որ պատմության հայր Հերոդոտոսը մատիեն անունով ցեղ է հիշատակում նաև Եվրատ գետից արևմուտք՝ Փոքր Ասիայում. ըստ նրա՝ Հալիս (= Կղզի-իրմակ) գետը հոսում է Հայկական լեռներից (= Փոքր Հայք), այնուհետև շրջվում է Հյուսիս և հոսում՝ «աջից մատիեններին և ահյակից փուլուգիացիներին ունենալով»։ Հավանաբար,

²⁰ Страбо́н, II, 1, 14, с. 79; XI, 7, 2, с. 482.

²¹ Ն. Ա. դ. ո. ն. ց. նշվ. աշխ., էջ 466:

²² Խորենացի, II, Ը, էջ 126-128:

²³ Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 138; ՀՀԾՏԲ, Հ. III, էջ 686:

²⁴ G. Sotomogóczy. Ummān Manda. – “Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae”, XXV, 1977, S. 44-45; Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство. М., 1959, с. 234. Հետագայում, սակայն, առավել հաճախ *umman manda* տերմինը վերագրվում է մարիերին, այն սկսում են գրել նաև *ma-da*, *ma-a[’-dā]*, *ma-ad-da* ձևով, որը բառացիորեն նշանակում է «մար, մեղացի»:

Հերոդոտոսն այստեղ մատիեն է անվանում կիմերների (դամիրների) մնացորդներին. ըստ նրա՝ այս մատիենների ռադմական հանգերձանքը նման էր պավագոնացիների, լիկիացիների, մարիանգիների և կապագովկիացիների զոբոստներին²⁵, Հեկատեոս Միլեթացին նույնպես գրում է, որ Գորդիաս քաղաքի մոտ բնակվող մատիենները հագնվում էին պալլագոնացիների նման²⁶. Փոքր Հայքի այս մատիենների անունով Հալիսի միջին հոսանքի մոտ գտնվող բնակավայրերից մեկը կոչվել է Մատիանե (ժամանակակից Նեվչեհիրի շրջանում)²⁷:

Թեոդոս, պատահական չէ պատմական Մանդա (հետագայում՝ Ազրնաս) գյուղի առկայությունը Գամիրքի կամ Փոքր Հայքի տարածքում՝ Կեսարիա (Մաթաթ) քաղաքից հյուսիս-արևելք: Մեկ այլ Մանդա գյուղ գտնվել է պատմական Խաղտիքում՝ Տրապիզոն քաղաքից մոտ 8 կմ հարավ²⁸. վերջինս կարող էր կառուցված լինել գամիրների ռադմական արչավանքի երթուղու վրա: Նմանապես նաև Մանդագուտ (? *Մանգակ-ուտ) գյուղը, որը գտնվում է Ճորոխի ստորին հոսանքի շրջանում, կարող է գամիրների հեռավոր արչավանքի արձագանքը պահած լինել: Ամենայն հավանականությամբ, հենց այս գամիրների ժառանգներն են, որ մ.թ.ա. VI դ. հույն հեղինակ Հեկատեոս Միլեթացու կողմից կոչվում են մատիեններ և տեղադրվում մոսխերի հարևանությամբ²⁹:

Ըստ երևույթին, մանդա(կ) ցեղանվամբ կոչված գամիրները, ցրված լինելով Մեծ և Փոքր Հայքերի առանձին շրջաններում, առավել երկար գոյատևել են Ուրմիա լճի ափերին՝ իրենց անունը թողնելով անտիկ հեղինակների Մատիենե երկրի վրա: Սակայն որոշ հին աղբյուրներից օգտված Հերոդոտոսը մի տեղ գրում է, որ Արաքս գետը հոսում է մատիենների երկրից և թափվում Կասպից ծովը. մեր կարծիքով՝ այստեղ խոսքը հենց Հայկական Արաքսի մասին է, որը սկիզբ է առնում Բյուրակն լեռից՝ Արչամուռնիք գավառի հարևանությամբ, որտեղ հետագայում իշխում էին Մանդակունիները³⁰: Փաստորեն, նշված հատվածում Հերոդոտոսի կողմից մատիեն են կոչվում միջնադարյան Մանգակունիների նախնիները:

Ուշագրավ է, որ Մանդակունիների տիրությունը կամ նրանց հարևանությամբ շատ տարածված են եղել մեղրի և դրա հրաշագործ էություն մասին հյուսված ավանդազրույցները, պաշտամունքային մեծ դեր է խաղացել Արածանիի ձախ վտակ Մեղը կամ Մեղրագետը, որի ջուրը համարվել է մեղրահամ թոնրից բխած³¹: Գամիրքում Արգեոս լեռան բլուրներից

²⁵ Հ ե ռ ո դ ո տ ո ս, I, 72, էջ 32, VII, 72, էջ 409:

²⁶ Н. Х а з а р д з е. К вопросу о локализации матиенов в свете древнегреческих источников VI—V вв. до н.э. — "Историко-филологический журнал", 1973, № 2, с. 200.

²⁷ Նույն տեղում, էջ 207:

²⁸ Տե՛ս ՀՀԾՏԲ, հ. III, էջ 685. Խաղտիքի Մանդան 1915 թ. ուներ ընդամենը 3 տուն հայ բնակիչ, որոնք խոսում էին Համշենի բարբառով:

²⁹ Տե՛ս Н. Х а з а р д з е. Նշվ. աշխ., էջ 200:

³⁰ Հ ե ռ ո դ ո տ ո ս, I, 202, էջ 83:

³¹ Մեղրագետի և Արածանիի վերաբերյալ առասպելների քննությունը տե՛ս Տ. Դ ա - լ ա լ յ ա ն. Հայոց վիսպական Մաթենիկ թաղուհու կերպարի ծագումնաբանության շուրջ. — «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 2002, № 2, էջ 199–200:

բխող Մեղրածոր գետի մասին նմանապես պատմվել է, որ սրա եզերքին գտնվող անմատչելի սեպ ժայռերի մեջ Հնուց միլիոնավոր մեղուներ իրենց բունն են դրել, և երբ արևը խփում է այդ քերծերին, մեղրը հալչում, հոսում է դեպի ներքևից անցնող դետակը և քաղցրացնում դրա ջուրը³²:

Այս առասպելներում մեղրը, կարծես, արարչագործության բաղկացուցիչ տարրերից է, նրա հետ է առնչվում կյանքի խորհրդանիշի՝ ջրի բխումը կամ շարժումը: Վիշապամարտի, աշխարհաստեղծման և երկրի արարման փոխաբերական մի պատկեր է ներկայացնում Սասունում պահպանված ավանդազրույցը. վիշապը գահավիժում է սարից՝ ճերմակ ճանապարհի նման հետք թողնելով, և ձորում շունչը փչում է, իսկ մոտակա գյուղի փեթակներից մեղուները գուրս են թափվում վիշապի հսկա մարմնի վրա՝ վիթխարի ամպ դոյացնելով, ինչից հետո վայրը ստանում է Մեղրածոր անվանումը³³: Այստեղ, ըստ էության, վիշապի մարմինը ստանձնում է կայուն հենարանի, թերևս՝ առասպելի վաղնջական տարբերակում՝ երկրի զանգվածի դեր, որի վրայի մեղուները և մեղրը առաջին կենդանի էակների արարման խորհրդանիշ են³⁴:

Ըստ Հովհան Մամիկոնյանի հաղորդման՝ Մանդակունիների տիրույթներից ոչ հեռու՝ Տարոնի Վիշապ քաղաքում պաշտվող Գիսանե աստծո երեք որդիներից մեկը կոչվել է Մեղտես (= մեղրատես), որից, իբր, իր անունն է ստացել Մեղտի բնակավայրը³⁵: Ուշագրավ է, որ ըստ Ս. Հարությունյանի ենթադրության՝ Վիշապ քաղաքը եղել է վիշապամարտի ծիսավայր, ուր կատարվել են Նոր տարվա ծիսական արարողություններ՝ ուղմի խաղեր ու մենամարտեր³⁶: Փաստորեն, վերը նշված զրույցներում արտացոլված է հեթանոսական նախաառասպելը, ըստ որի՝ վիշապամարտիկ արարիչը հաղթում է քառասյին ուժերը խորհրդանշող վիշապին, վերջինս գահավիժում է իր բարձունքից, գառնում հենարան երկրի համար, միևնույն ժամանակ բացվում է կյանքի աղբյուրի՝ երկնային ջրի ճանապարհը:

Մշո դաշտի հարավային կողմում՝ Տիրկատար լեռան լանջին, Առաքելոց վանքի ճանապարհին, գտնվել են «Մեղրի քարերը», որոնց մասին ավանդազրույցը պատմում էր, թե իմաստուկության և դպրության աստված Տիրը սովորեցրել է ունեցել նստել այդ քարերի վրա և ուտել հատուկ իր համար պատրաստվող մեղրը, որը պահվում էր մոտակա քարայրի 10 կարասների մեջ. այս մեղուներն, ըստ ավանդության, համարվում էին հեթանոս

³² Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատմ. Երևան, 1969, № 237, էջ 90:

³³ Նույն տեղում, № 122, էջ 48-49:

³⁴ Այս ավանդազրույցը համեմատելի է սկանդինավյան արարչագործական առասպելի հետ, որտեղ տապալված հսկայի դիակի մեջ տարածված որդերից առաջանում են կենդանի արարածները՝ ավիբը:

³⁵ Հ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն յ ա ն. Տարոնի պատմություն (աշխատասիրությունք վ. Վարդանյանի). Երևան, 1989, էջ 47:

³⁶ Ս. Հ ա ռ ու թ յ ու ն յ ա ն. Մշո Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքերը և Ս. Կարապետի կերպարն ըստ ժողովրդական ավանդության. - Հայոց սրբերը և սրբավայրերը (ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ). Երևան, 2001, էջ 24:

մատյաններից դուրս թուած տառեր³⁷: Ինչպես տեսնում ենք, մեղրն այստեղ ոչ միայն բանաստեղծական ոգեչնչման խորհրգանիչ է, այլև ամպրոպային շանթառաքի կերպարին առնչվող իմաստաբանական շարքի բաղկացուցիչ տարր, որն ունի հնդեվրոպական այլ զուգահեռներ ևս³⁸:

Թերևս, մեղրի հետ կապված պատկերացումների առաջացմանը նպաստել են բնական պայմանները՝ Մշո երկրում առատորեն հանդիպող գագպեն կամ մանանան, որը «հունիս և հուլիս ամսոց շոգ օրերուն պղտորագույն և անքամի օգերուն կիջնե մացառներու տերևներուն, փշոտ գագերուն և մատուտակ (! - S. Դ.) ըսված խոտերուն վրա, թանձրացած մեղրի նման, ամենադուտ և քաղցր»։ այս առումով, սոսկ բառախաղ չպետք է դիտել հետևյալ երկտողը՝ «Մշո սարեր մշուչ է, յուր հողն ու ջուր անուչ է»³⁹: Աստվածային մեղրի պաշտամունքը առնչվել է նաև Կենաց ծառի հետ, որի տերևներն, ըստ հնդեվրոպական դիցաբանական պատկերացումների, պատված են մեղրացողով, իսկ արմատները սնվում են մեղրային ակունքներից⁴⁰ (Հմմտ. Մեղրադետ): Վանա լճից Հարավ-արևմուտք դտնվող գավառները՝ Շատախը, Մոկսը, նույնպես հռչակված են եղել իրենց «առատ և պատվական» մեղրով⁴¹:

Հայոց Մանգակունիների կամ քրդական Մանդկի ցեղի անունով է, հավանաբար, կոչվել Մոկս քաղաքի հինգ թաղերից մեկը՝ Հայ. Մանդականց թաղը (քրդ. Ruzkê, Melan)⁴²: Այդ նույն արմատի հետ, հավանաբար, առնչուելուն ունի Մանդենց գյուղի անունը, որը գտնվում է Բիթլիսի գավառի իսիզանի գավառակի Շենաձորի շրջանում՝ Վանա լճից Հարավ-արևմուտք: Հետաքրքիր է նաև Մանդկներ գետանունը, որն այլ կերպ կոչվում է Խաչվա և գտնվում է Արածանիի վերին հոսանքի շրջանում, սկիզբ է առնում Սուկավետ լեռան Մանդկներ կոչվող ճյուղավորուելյուններից և թափվում է Բագրևանդ վտակի մեջ⁴³:

Քրդական մանդկի ցեղի հետ չպետք է շփոթել Արճակի Մանդան կամ Մամգանց ցեղը (< քրդ. mehindan), որը նույն Մահմուդի աշխրեթն է Հայերի կողմից կոչված նաև «մահմատկցի»⁴⁴: Հավանաբար, այդ ցեղի անունն է ստացել Արճակի շրջանի Մանդան դյուղը, որը 1909 թ. ուներ 35

³⁷ Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., №195, էջ 74, ի. Դ ա շ տ ե ն ց. Ռանչպարների կանչը. Երևան, 1979, էջ 29-30:

³⁸ Գ. Բ ո չ ա Ր յ ա ն. Դվին ամրոց-սրբավայրը Հայոց դարձի նախօրեին. - Հայոց սրբերը և սրբավայրերը, էջ 291-292, է. Պ ե տ Ր ո ս յ ա ն. Մեղր-արդար մեղու-Մայր Աստվածածին. - Հայոց սրբերը և սրբավայրերը, էջ 377-378: Բանաստեղծական ոգեչնչման այս ձևը քրիստոնեություն օրոք վերադրվել է Սբ. Կարապետին, որի սրբավայրը գտնվում էր հենց վերոհիշյալ Առաքելոց վանքում: Սբ. Կարապետը համարվում էր գուսանների և բանաստեղծների հովանավորը, պատահական է, որ «Մշո աշխարհ լի է եղեր բանաստեղծներով, երգասացներով, բազմաթիվ աշուղներու տեղ է եղեր այս երկիրը. և այս բնական հետևուելյուն է այն քաջաց և քաջագործությանց, որոց դյուցաղնագործությունները կը դյուցաբանեին» (Գ. Ս Ր Վ ա ն ձ տ յ ա ն ց, նշվ. աշխ., էջ 32):

³⁹ Գ. Ս Ր Վ ա ն ձ տ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 43, 72:

⁴⁰ E. M. М е л е т и н с к и й. Мед поэзия. - "Мифы народов мира". Т. II, М., 1992, с. 128.

⁴¹ Գ. Ս Ր Վ ա ն ձ տ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 402:

⁴² И. А. О р б е л и. Фольклор и быт Мокса. М., 1982, с. 141.

⁴³ ՀՀՇՏԲ. Հ. II, էջ 671, Հ. III, էջ 686:

⁴⁴ Գ. Բ ա դ ա լ յ ա ն. Վանի էյալեթի քրդական իշխանությունները (XVI դ. - XIX դ. 40-ական թթ.). - «Իրան-նամէ», 1998, №29-31, էջ 34-35:

տունն հայ, 33 տունն քուրդ բնակիչ⁴⁵: Սակայն, օրինակ, նույն Վանի նահանգի Արճեչի շրջանում գանվող Մանդասոր (*Մանդածոր) քրդական գյուղի անունը, ամենայն հավանականությամբ, կապված է մանդակ ցեղանվանը, որն առկա է նաև վերոհիշյալ Մանդականց, Մանդենց, Մանդկներ տեղանուններում, և որից հետագայում կարող էր կազմվել Մանդակունի նախարարական տոհմանունը:

Չի բացառվում, որ մա(ն)ս/դ արմատն առկա է նաև Մեծ Հայքի Մարացոց կամ Մուրացյան իշխան Արգամի հարճի՝ Մանդու-ի անվան մեջ⁴⁶: Հավանաբար, Մանդակունիները տիրույթներ են ունեցել մի քանի տարբեր շրջաններում, քանի որ այս տոհմի որոշ իշխանների անուններ տիպական են հատկապես Հայաստանի հարավային՝ Վան և Կապուտան (Ուրմիա) լճերի միջև ընկած տարածքներին: Վ դ. հայտնի էին Սահակ և Փարսման Մանդակունիները, որոնք համարվում էին «քրիստոսասեր նախարարներ» և այդ պատճառով կալանավորվել էին Հազկերտ II-ի կողմից⁴⁷:

Սլկունիները, նախքան Մամիկոնյանների դալը, տիրում էին Տարոնին: Նրանք պատկանում էին այն բնիկ տեղական ցեղերին, որոնց մասին Պատմահայրը դժվարանում է ասել՝ արդյոք Հայկից են ծագում (այն է՝ Հայկական ծագում ունեն), թե «նրանից առաջ մեր աշխարհում ապրողներից, որոնց գոյություն մասին պատմում են զրույցները»⁴⁸: Սլկունյաց տան նախահայր էր համարվում «դժնյա և քաջ» Սլաքը. այս նույն անունն է, հավանաբար, կրել մ.թ.ա. 53 թ. Խառանի ճակատամարտում սլարթև թագազիր ասպետ Սուրենի հետ Հայ-սլարթևական ուժերը գլխավորող Հայ Սիլվակեսը (Հայ. Սլաք)⁴⁹: Խորենացու համաձայն՝ Հայոց արքան մ.թ.ա. II դարում Սլկունյաց նախահայր Սլաքին նշանակում է «լեռը [Սիմ?] պահպանելու և քոչեր որսալու»⁵⁰:

Գ. Սրվանձտյանցի ենթադրությամբ՝ Տարոնի Սալքան կամ Սալկուն գյուղն իր անվամբ պարտական է Սլկունիներին⁵¹: Այս առումով հատկանշական է Սլկունյաց տան Սաղկունի անվանումը, որը պահպանվել է միջնադարյան ձեռագիր մի փաստաթղթում՝ «Զորանամակում»⁵²: Մեր օրերում Մուշի ցեղային միություն մեջ հայտնի էր քրդական Սիլվան ցեղը, որն իր անունը կարող էր ստանալ հիշյալ տեղանունից կամ տոհմանունից: Բացի այդ, Ա. Տեկանցը, Սղերդի քրդական ցեղերը թվարկելիս, նշում է սլկոնցի և ալանցի քրդերի մասին⁵³, իսկ Շարաֆ-խանը սիլկի անունով ցեղ

⁴⁵ ՀՀՇՏԲ. հ. III, էջ 685:

⁴⁶ Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, II, ԾԱ, էջ 215: Հմմտ. նաև Մարաստանի վերջին թագավոր Աժդահակի դստեր և Աքեմենյան առաջին արքա Կյուրոսի մոր անունը Մանդանե (Հ Ե Ր Ո Մ Ո Ս, I, 107-108, էջ 47):

⁴⁷ Փ ա Ր Ա Ե Գ Ի, II, ԽԷ, էջ 204:

⁴⁸ Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, II, Ը, էջ 130:

⁴⁹ П л у т а р х. Сравнительные жизнеописания. Т. II, М., 1963, с. 253; Սիլվակես և Սլաք անունների համադրումը՝ J. R u s s e l l. Polyphemos Armenos. — "Revue des etudes arméniennes", t. 26, 1996-1997, p. 26.

⁵⁰ Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, II, Ը, էջ 130:

⁵¹ Գ. Ս Ր Վ Ա Ն Ը Տ Յ Ա Ն Գ. Նշվ. աշխ., էջ 74:

⁵² Ն. Ա Ղ Ռ Ն Գ, Նշվ. աշխ., էջ 282:

⁵³ Ա. Տ Է Կ Ա Ն Գ. Այցելություն ի Հայաստան 1878 թ., Երևան, 1985, էջ 110:

է հիշատակում Լուրաստանում (Հյուսիսարևմտյան Իրան), ընդ որում նույն տեղում հիշատակվում են նաև ալանի և սակի ցեղերը⁵⁴: Պետք է հաշվի առնել, որ քոչվորական կենցաղի պատճառով քրդական ցեղերը չափազանց շարժունակ էին, և միևնույն ցեղը մեկ դար հետո կարող էր հայտնվել հարյուրավոր կիլոմետրեր հեռու այլ պետություն սահմաններում:

Բացի Սլաք Սլկունուց, Հայ պատմագրությանը հայտնի է եղել նաև Սղուկ Սլկունին, որն ապստամբեց Տրդատ Մեծի (298-330 թթ.) դեմ և դավադրաբար սպանվեց Մամիկոնյանների նախահայր Մամգունի կողմից⁵⁵:

Մամիկոնեանների ծագման շուրջ դեռ հնուց եղել են մի շարք վարկածներ և առասպելներ, որոնք վիճելի տեսակետների տեղիք են տվել⁵⁶: Մի բան, սակայն, միանշանակ է պահանջված բոլոր տարբերակներում, որ այս տոհմն ունի ոչ հայկական ծագում («Քանզի ոչ են սոքա որդիք աղբաձնին Արամենակայ»⁵⁷), և որ նրա նախնին կամ նախնիները իրենց աղյսով Հայաստան են եկել Իրանի և Չինաստանի միջև ընկած մի երկրից, որը կոչվել է «Ճենաց երկիր»: Ընդ որում, որոշ ժամանակ նրանք բնակվել են Քուշանաց երկրի Բահլ (ժամանակակից Աֆղանստանի Բալխ) քաղաքում⁵⁸:

XVIII դ. Մ. Չամչյանը ենթադրում էր, որ «Ճենաց երկիր» կամ «Ճենաստան» ասելով Հայ մատենագիրներն ի նկատի են ունեցել երկու երկիր՝ «մին ... ի ներքին կողմն արևելից ասիոյ՝ ընդ մէջ սկիւթացուց և չինէացուց, և միւսն առ սահմանօք հոնաց և հեփթաղաց»⁵⁹: Անցյալ դարասկզբին Մ. Թումանյանը նշում էր, որ «Մամիկոնյանները եկել են մեր երկիրը Ճենաստանից և որ այդ Ճենաստանը կամ այժմյան Չինաստանն է, կամ, առնվազն, նրա մի մասը»⁶⁰: Բ. Պատկանյանը, սակայն, կարծիք է հայտնել, որ Մամիկոնյանների նախնի ճենները Հայաստան են դաղթել Ամուդարյայի ափերից⁶¹, ուստի և երբեմն Ճենաստանը տեղադրվում է Իրանի իտրասան նահանգի անմիջական հարևանությունում՝ Ամուդարյա և Սիր-դարյա գետերի միջև ընկած տարածքում, որը արաբների նվաճումից հետո կոչվեց Մավերաննահր՝ Սամարղանդ կենտրոնով⁶²:

⁵⁴ Ш а р а ф - х а н и б н Ш а м с а д д и н Б и д л и с и (далее – Шараф-хан). Шараф-намэ. Т. I, М., 1963, с. 253.

⁵⁵ Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, II, ԶԴ, էջ 276–278:

⁵⁶ Մամիկոնյանների ծագմանն առնչվող մեծածավալ գրականության հանգամանակից քննությունը տե՛ս Ա. Բ է շ ի շ Ե Ա Ն. Մամիկոնեանների ծագումը իտալականների առնչող տեսակետի վերլուծություն.— «Հայկագեան հայագիտական հանդէս». հ. ԻԲ, Պէյրուկթ, 2002, էջ 81–86, 96–101:

⁵⁷ Պատմութիւն Սեբեոսի (աշխատասիրությունը Գ.Վ. Աբգարյանի). Երևան, 1979, Դ, էջ 56:

⁵⁸ Նույն տեղում, էջ 57:

⁵⁹ Մ. Չ ա մ չ Ե ա ն ց. Պատմութիւն Հայոց. հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 164:

⁶⁰ Մ. Թ ո լ մ ա ն Ե ա ն. Մի քանի նկատողություններ Մամիկոնեանց գաղթականության մասին.— «Հանգեց մասորյա», 1911, №9, էջ 514:

⁶¹ К. П а т к а н о в. О месте, занимаемом армянским языком в кругу индоевропейских. — "Известия Кавказского отдела императорского русского географического общества", т. VI, Тифлис, 1879—1881, с. 47.

⁶² Հ. Ս Ս վ ա զ յ ա ն. Ճեները և «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների.— ՊԲՀ, 1976, №4, էջ 207–209:

Չի բացառվում նաև, որ ձենաստան ասելով միջնադարյան Հայ հեղինակները հասկացել են Թուրքանը՝ այսպես կոչված Արևելյան Թուրքեստանը, ներկայիս Չինաստանի արևմտյան շրջանները: Ամեն դեպքում, դուրս գալով Իրանի և Չինաստանի միջև ընկած այդ տարածքներից և երկար դեգերելով՝ «Մամգոնյանները» տիրանում են Տարոնին և բնաջինջ անում Սլկոնյաց ցեղը, բայց Տրդատ արքան Մամիկոնյան տոհմի նախահայր Մամգոնին «հրամայում է մնացած Սլկոնիներին չվնասել»⁶³:

Մամգոնին, ըստ Խորենացու, դայակորդին էր ձենաստանի Արբոկ Թագավորի, որը կոչվում էր ձեն-Բակուր⁶⁴: Ուշագրավ է, որ արևելաիրանական ծագում ունի ոչ միայն Բակուր (հմմտ. օսերեն Bakul անձնանունը), այլև Արբոկ անունը, որը, ամենայն հավանականությամբ, գալիս է *Abrong ձևից՝ /w-ի անկմամբ. վերջինիս օսերենում համապատասխանում է ævrong / ærvong «սթալի՝ ոչ հարած» բառը, ճիշտ ինչպես ἄβραγος (Արբակ) անվան դիմաց օսերենում ունենք ævrag «ամպ» և arv «երկինք» բառերը⁶⁵:

Մամգոն անունը, ամենայն հավանականությամբ, պարզապես իշխանական տիտղոս է եղել, այն համեմատվում է չինական ձեն տոհմի նահապետական կոչման հետ՝ Խու Գուն Ման, որը բառացիորեն նշանակում է «մորուքավոր իշխան Ման ցեղի»։ Ման ընդհանուր անվամբ չինացիներն անվանել են հարավային այլազգիներին⁶⁶, հնարավոր է, որ այդ բնորոշման հիմքում ընկած է իրան. *manu «մարդ, տղամարդ» արմատը: Եվ իրավ, Գուն Ման տիտղոսը հայերի մեջ միանգամայն կարող էր վերածվել Մամգոն անձնանվան: Հետագայում արդեն ժողովրդական դիցաբանական պատումը Մամիկոնյանների ծագումը վերագրեց առասպելական տոհմածին երկու եղբայրների՝ Մամիկի (Մամ) և Կոնակի (Կոն), որոնց մասին ավանդազրույցը հազորդում է Սեբեոսը: Ընդ որում, ուշագրավ է, որ այդ եղբայրների անունները մտացածին չեն և Մամիկոնյան տոհմանվան ժողովրդական պարզ ստուգաբանության արդյունք չեն, քանզի դրանց գուգահեռ ձևերը՝ հանդիպում են II-III դդ. մերձսևծովյան սլյուկական անձնանուններում, ինչպես՝ Μάμιος և Κόνος / *Κόνακος⁶⁷:

Նոր ժամանակներում հասնանցի քրգերը, ըստ Գ. Սրվանձտյանցի, կոչվել են Մըմըկանի և «Մամիկոնյան տունն ենք մենք՝ կ'ըսեն»: Նրանք և «պըչըքցի» քրգերը խոսում էին նաև հայերեն և «հայ եմք եղեր, — կ'ըսեն, — ու մեր ազատության համար զենքը չձգեցինք, հավատքը փոխեցինք»⁶⁸: Այլ աղբյուրներում հիշատակվում է մամգոնիների (մամգանցիների

⁶³ Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, II, 27, էջ 279: Հայ մեծանուն վիպասան Րաֆֆին Մամիկոնյաններին նկարագրում է շեղաչք արտաքինով, ինչը զուտ գեղարվեստական հնարանք է: Իրականում Մամիկոնյան տունը սերում էր ձենաստանի արիական ցեղերից, ինչը հստակ երևում է Թեկուզ նրանց անձնանուններից:

⁶⁴ Խ ո Ր Ե Ն Ա Գ Ի, II, 21, էջ 268:

⁶⁵ Տ. Դ ա լ ա լ յ ա ն. Հայ-օսական լեզվամշակութային առնչություններ (Թեկնածուական ատենախոսություն). Երևան, 2002, էջ 74, 81:

⁶⁶ Մ. Թ ո լ մ ա ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 518-519:

⁶⁷ Корпус боспорских надписей (под редакцией В. В. Струве). М. — Л., 1965, с. 364, 662-663, 695-696.

⁶⁸ Գ. Ս Ր Վ Ա Ն Ը Տ Յ Ա Ն Գ. Նշվ. աշխ., էջ 74:

րի, մամգուն, մեմգան) աշիրեթը, որի անդամները կրոնով ալևի էին և խոսում էին զազայերեն⁶⁹: Գ. Սրվանձտյանցը մըմըկանի աշիրեթը հստակ տարանջատում է «զազա քրդերից»։ Թերևս, մըմըկանին և մամգունին առանձին ցեղեր էին, քանի որ առաջինը տեղորոշվում է Տարոնում, իսկ երկրորդը տիրում էր հարևան Դերսիմի՝ Թազար, Կաղնուտ, Մեմգան, Սիլվան և այլ դյուղերի⁷⁰: Քրդական և զազայական այս երկու ցեղերն են, հավանաբար, այլ աղբյուրներում հիշատակվում Մոմկացիք և Մանգուր անուններով⁷¹: Մամգունի ցեղը հայտնի էր նաև Մամեկանլի կամ Մամականլու անվամբ:

Անկասկած, Մամիկոնյանները, որպես իշխանական տոհմ, դեռ մինչև քրդերի երևան գալը վաղուց վերացել էին, ուստիև նշված քրդական ցեղերն իրենց անվանումները կարող էին ստանալ համապատասխան տեղանուններից: Ըստ ավանգուլթյան՝ Մամիկոնյան տան հիմնադիր-եղբայրներից (Մամիկ և Կոնակ) մեկի անունով է կոչվել Դերսիմի Մամեգի (Մամիկ) դյուղը, որը դտնվում էր Պալքան ցեղի իշխանությունում⁷²: Արժանահիշատակ է նաև նույն շրջանի Մամկո դյուղը, որը պատկանում էր «բաղեկրան» (հայերը կոչում էին «բաղեակիրներ») ցեղին⁷³: Ընդհանրապես, Ծոփքի և Բարձր Հայքի գավառներից կազմված Դերսիմի երկրամասի գյուղերի մոտ կեսը XX դարասկզբին ուներ խառը բնակչություն՝ հայերից ու զազաներից բաղկացած: Հետաքրքիր է, որ զազաների մեջ ձուլված բազմաթիվ հայեր (օրինակ՝ «քաջարան» ցեղին պատկանող) տակավին պահում էին իրենց հին բարբառը, որն անվանում էին «ճնճղկա լեզու»⁷⁴: Բացի այդ, զազաների մեջ «հայկական էթնիկ տարրի աստիճանական ձուլումը՝ թողել է իր հստակ հետքերը» այդ ժողովրդի ազգային դիմագծի վրա⁷⁵:

Պալուսիները՝ Պալուսյաց իշխանական տան ներկայացուցիչները, տիրույթներ են ունեցել Պալուսիքում, ընդ որում այս անվամբ Մեծ Հայքում գոյություն է ունեցել երկու գավառ՝ մեկը Տուրուբերան աշխարհում՝ Արշամունիք և Տարոն գավառների միջև, իսկ մյուսը Վասպուրականում՝ Վանա և Արձակ լճերի միջև: Վասպուրականի Պալուսիքը կոչվել է նաև Բալունիք կամ Պալունիք / Պալունիք, իսկ Տուրուբերանի Պալուսիքը, փաստորեն, ոչ թե առանձին գավառ էր, այլ կազմում էր Տարոն գավառի մի մասը. այն փոխված էր Քարքե լեռան հարավում և ընդգրկում էր Գիսանե աստծո երեք որդիներից երկուսի անվամբ կոչված Հոռեան ու Կուառս

⁶⁹ Գ. Հ ա լ ա ղ յ ա ն. Դերսիմի հայերի ազգագրությունը. — «Հայ ազգագրություն և բանահյուսություն». հ. V, Երևան, 1973, էջ 22, 36, 41, 56, 60, 84:

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ Մ. Թ ո լ մ ա ն ե ա ն. նշվ. աշխ., էջ 525:

⁷² Գ. Հ ա լ ա ղ յ ա ն. նշվ. աշխ., էջ 43-44:

⁷³ Նույն տեղում էջ 60:

⁷⁴ Նույն տեղում, էջ 64:

⁷⁵ Մ. վ ա ն Բ ո ո յ ն ե ս ե ն. Կրոնը Քուրդիստանում (մաս երկրորդ). — «Իրան-նամէ», 1993, № 2, էջ 31:

բնակավայրերը: Խեթական սեպագիր արձանագրություններում այս շրջանը և այնտեղ գտնվող լեռը կոչվում էին Պալունա անվամբ⁷⁶:

Ամենայն հավանականությամբ, Պալունի տոհմանունն ունի ցեղանվանական ծագում, թերևս նույն պալ / պաղ / բալ արմատն առկա է Ծոփքի Պաղնատուն / Բաղնատուն (Պաղանական տուն) և Բալահովիտ / Բաղահովիտ գավառանուններում. վերջինս, հավանաբար, խեթական աղբյուրներում հանգրիպում է Պալապալաչա ձևով⁷⁷: Նշված ցեղանունն է, ըստ երևույթին, նաև Բալահովտի կենտրոնի՝ Բալու / Պալու բերդաքաղաքի, Բարձր Հայքի Պալապան շրջանի և Պալաուի գյուղի, Փոքր Հայքի Սեբաստիայի նահանգի Պալահոր / Բալահոր գյուղի, Տարոնի Ս. Կարապետ վանքի մոտ գտնվող Բաղս կամ Բաղու գյուղի, Վանա լճի հարավ-արևմուտքում գտնվող Պաղէշ / Բաղէշ քաղաքի անունների մեջ և այլուր: Հավանաբար, այդ ցեղանունից է կազմված նաև խեթական արձանագրություններում հիշատակվող Պալսուսա քաղաքի անունը, որը տեղագրվում է Փոքր Հայքում՝ հետագայի Նիկսար (Նեոկեսարիա) քաղաքի մոտ, ինչպես նաև այստեղ է գտնվել Պալա երկիրը՝ անմիջապես Արևելապոնտական լեռներից հարավ⁷⁸: Դրանից բացի, Ծոփքում կամ խեթական արձանագրությունների իսուվայում է գտնվել Պալիսնա քաղաքը՝ Արածանի գետի ստորին հոսանքի շրջանում:

Պալունիների հայոց իշխանական տան անվանումը պահպանվել է մերօրյա տեղանուններում և ցեղանուններում. այսպես, վերոհիշյալ պալքան քրդական ցեղը (տե՛ս էջ 186), որը կոչվել է նաև Պալիկան կամ Պալան, ըստ ամենայնի, կապված է Տարոն-Տուրուբերանի Պալունիք գավառանվան հետ: Հետաքրքիր է, որ Պալիկան / Բալիկան է անվանվել նաև Բյուրակն-Մնձուրյան լեռնաշղթայի լեռներից մեկը, ինչպես և Բալուի գավառակի գյուղերից մեկը, իսկ Պալան անվամբ կոչվել է Դերսիմի գավառի գյուղերից մեկը՝ Արածանի գետի աջակողմյան վտակի մոտ⁷⁹: Չի բացառվում, որ Պալ(ք)ան ցեղին ազգակից էին պելեքցի քրդերը Տարոնի հարևան Խոյթ գավառում. նրանք հիշվում են ի թիվս «Տափեցի, Ղութեցի, Սասունցի և Եեկոյի» ցեղերի⁸⁰: Այդ նույն ցեղն է, հավանաբար, որ Գ. Սրվանձսյանցի երկում հանգրիպում է բալաքցիք անվամբ ի թիվս Մշո դաշտը բնակեցնող հասնանցի և ջիբրանցի քրդերի⁸¹:

Վերոհիշյալ զուգահեռներին գումարած՝ հատկանշական է նաև Շարաֆ-խանի հաղորդումը. նա գրում է Աղձնիք աշխարհի Անդեղտուն գավառի հարևանությամբ գտնվող քրդական Պալո իշխանության մասին⁸², որի անունը, ըստ երևույթին, հետագայում մնացել է Սասունի Պալո հայաբնակ գյուղի անվան մեջ, նույն տոհմանունից է կազմվել նաև Սասունի Փսանք գավառակի Պալոյենք / Բալոյինք հայկական գյուղանունը, ինչ-

⁷⁶ ՀՀՇՏԲ. հ. IV, էջ 289-290:

⁷⁷ ՀՀՇՏԲ. հ. I, էջ 552:

⁷⁸ В. Н. Х а ч а т р я н. Восточные провинции Хеттской империи. Ереван, 1971, с. 35-36, 72-73, ՀՀՇՏԲ. հ. IV, էջ 288, 285:

⁷⁹ ՀՀՇՏԲ. հ. IV, էջ 288:

⁸⁰ Ա. Տ և կ ա ն ց. նշվ. աշխ., էջ 70:

⁸¹ Գ. Ս ր վ ա ն ձ ս յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 418:

⁸² III а р а ф - х а н, III, 2, с. 239-240.

պես և, հավանաբար, Մոկսի գավառակի Պալենց գյուղի ու Բիթլիսի նահանգի Սպարկերտի գավառակի (= Մոկքի Իշայր գավառի) Պաղենց / Բաղենց գյուղի անունները⁸³: Ավելի հնում, սակայն, Աղձնիքում հիշատակվում է Պալի գյուղը կամ վանքը, որտեղ IV դ. պահպանվում էին Թովմա առաքյալի մասունքները⁸⁴:

Պալուենյաց իշխանական տան մասին շատ քիչ տեղեկություններ են հասել մեզ, քանի որ այն եղել է համեմատաբար փոքր և աննշան: Հայտնի է միայն Արտակ Պալուենի սեպուհը, որը մասնակցել է Վարդանանց պատերազմին և նահատակվել, ինչպես նաև Փապակ Պալուենին, որը Վահան Մամիկոնյանի զինակիցն էր և նրա գլխավորած ապստամբության ակտիվ մասնակից⁸⁵: Ենթադրվում է, որ V դ. Հայտնի Պալուենյաց տեր Վարադշապուհը Վասպուրականի Պալուենիք գավառից էր⁸⁶:

Ռշտունիների ծագման վերաբերյալ որևէ ավանդազրույց չի պահպանվել: Խորենացու կարծիքով՝ նրանք Սիսական տան մի հատվածն էին կազմում⁸⁷, այսինքն՝ Վասպուրական էին տեղափոխվել Սյունիքից: Սակայն, ըստ Պատմահոր, պարզ չէ՝ «արդյոք գավառնե՞րն են կոչվել մարզկանց անունով, թե գավառների անունով կոչված են նախարարությունները»: Ըստ երևույթի, նշված վարկածներից առավել հավանականը երկրորդն է:

Ռշտունիք (Ըռըշտունիք) գավառը գտնվել է Վանա լճի և Մոկք նահանգի միջև, կոչվել է նաև Մանակերտ կամ Վուշիկ, այստեղ են Արտոս լեռը և Նարեկավանքը, ինչպես և Աղթամար ու Առտեր կղզիները. տարածքով Ռշտունիքը համապատասխանում էր հետագայի Վանի նահանգի Գավաշ, Ոստան և Կարճկան գավառակներին⁸⁸:

Հայ մատենագրության մեջ Ռշտունիները Հայտնի էին (վ)ուշիկ անվամբ, հնարավոր է, որ Ռշտունիք տեղանվան Վուշիկ տարբերակն առաջացել է *Վ(ու)ուշիկ ձևից: Գ. Սրվանձտյանցի գրառած «աշխարհիկ երգերից» մեկը վերնագրված է «Երգ վրուշիկներու (այսինքն՝ ոշտունցվոց)»⁸⁹: Թերևս, վուշիկ բառի հետ է առնչվում քրդական ոռովի ցեղանունը՝ (v)ʷʷsik > ʷʷos(i)k-i > řoz(i)ki հնչյունական անցմամբ, և Շատախի (= Մոկքի Ջերմաձոր գավառի) գյուղերից մեկը՝ Առոսկի (Հառոշիկ): որը XVIII դ. Շատախի Հայ մելիքի նստավայրն էր⁹⁰: Հառոշիկ գյուղը XX դ. սկզբին լիովին Հայաբնակ էր և ուներ 12 տուն բնակիչ⁹¹: Սրա հարակից շրջաններում բնակվում էին քոչվոր Հայեր՝ մոտ 500 տուն, «որ Շատախու

⁸³ ՀՀԾՏԲ. Հ. IV, էջ 289, 294:

⁸⁴ Նույն տեղում, Հ. IV, էջ 287:

⁸⁵ Փ ա ռ պ ե ց ի, II, ԼԴ, ԼԹ, էջ 148, 170; III, ԼԱ, էջ 314:

⁸⁶ Նույն տեղում, II, ԻԳ, ԼԶ, ԽԱ, էջ 102, 156, 172:

⁸⁷ Խ ո ռ Ե ն ա ց ի, II, Ը, էջ 132:

⁸⁸ Ա ն ա ն ի ա Շ ի ռ ա կ ա ց ի. Մատենագրություն. Երևան, 1979, էջ 294–295, Գ. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 403, ՀՀԾՏԲ. Հ. IV, էջ 447:

⁸⁹ Գ. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 258:

⁹⁰ Գ. Բ ա ղ ա յ ա ն. Վանի էյալեթի..., էջ 31: Ջի բացառվում նաև, որ վուշիկ բառը պարզապես կապված է Հայ.բրբ. վուշիկ «կարմրել» բառի հետ, քանի որ վուշիկները եղել են կարմրավուն:

⁹¹ ՀՀԾՏԲ. Հ. I, էջ 331:

կողմի կորդուաց լերանց մեջ աստանդական կշռըին և հայերեն մոռցած են»⁹²:

Պարզ չէ՝ արդյոք ոռոժիկի ցեղանվան հետ կապ ունի ուաչլի քրդական ցեղը Ջեզիրեում⁹³, սակայն դրա հետ, հավանաբար, առնչվում է Ռոսթկե տեղանունը. այս անունով, ինչպես նշել ենք, քրդերը կոչում էին Մոկս քաղաքի Մանդականց թաղը⁹⁴: Հետաքրքիր է, որ Բայազետ քաղաքի թաղերից մեկը նույնպես կոչվում էր Վուչիկների թաղ⁹⁵:

Ռոսթկին (ռոժլիկի, ռուժակի, ռուզիկի) քրդական ամենահայտնի ցեղերից է, իշխում էր Բիթլիսում (Բաղեշ) և մտնում Հաքքարի ցեղամիավորման մեջ⁹⁶: XVII դ. թուրք ուղեգիր Էվլիյա Չելեբին այս ցեղն անվանում է ռուզիկի կամ ռուժակի և համարում «քրդական լեզուներից» մեկը՝ զազա, սուրանի, հիքքարի, սինջարի ու այլ (թվով 13) լեզուների հետ մեկտեղ, բացի այդ Չելեբին տարբերակում է քրդական 42 բարբառ, «որոնք իրար նման չեն և մի բարբառով խոսողը մյուսին կարող է հասկանալ միայն թարգմանչի միջոցով»⁹⁷: Ըստ Չելեբու՝ ոռոժիկ քրդերը «այնպիսի յուրահատուկ բառեր են գործածում, որ մյուս երկրների քրդերը չեն հասկանում: Բուժակի քրդերը շատ լավ խոսում են նաև 12 քրդական այլ լեզուներով»⁹⁸: Սրանք «հին քրդերից են» և «մյուս քրդերի նման քաջ ու արի չեն: Բեղերը հինայած, աչքերին սուրմա քաշած, մաքուր ու առաքինի, քաղցրախոս մարդիկ են»⁹⁹:

Չելեբին անձամբ հյուրընկալվել է Բիթլիսի իշխան Աբդալ-խան Ռոսթկիի մոտ և բավական երկար ապրել Բիթլիսում, որը, նրա տեղեկություն համաձայն, «40 հազար բնակիչ ունի, որոնք սլաոականում են ռուզիկի ցեղին»¹⁰⁰: Թուրք ուղեգիրը Բիթլիսի իշխանից մի մուխսամես (բանաստեղծություն) է գրի առել, որը վերջինս հորինել էր ոռոժիկ ցեղից «հավաքած բազմաթիվ ընտիր բառերով ու խոսքերով»¹⁰¹: Այս տեքստի մերօրյա ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն գրված է հիմնականում հայերեն բառերով և թուրքերեն քերականությամբ: Հաշվի առնելով այդ հանդամանքը՝ հոլանդացի գիտնական Մարտին վան Բրոյնսսենը եզրակացնում է, որ ոռոժիկ ցեղն ունի հայկական ծագում¹⁰²:

⁹² Ե. Տ և կ ա ն ց. Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական (1872-1873 թթ.): Երևան, 1991, էջ 235:

⁹³ III a p a ֆ - x a n, II, 4, с. 178.

⁹⁴ И. А. О р б е л и. Նշվ. աշխ., էջ 141:

⁹⁵ ՀՀՇՏԲ. հ. IV, էջ 809:

⁹⁶ E. B. S o a n e. To Mesopotamia and Kurdistan in Disguise. London, 1926, p. 406.

⁹⁷ Է վ լ ի յ ա Չ շ լ շ ի (աշխատասիրությամբ Ա. Խ. Սաֆրասյանի).— Օտար աղբյուրների Հայաստանի և հայերի մասին. հ. IV, թուրքական աղբյուրներ, Գ, Երևան, 1967, էջ 192:

⁹⁸ Նույն տեղում, էջ 202:

⁹⁹ Նույն տեղում, էջ 198-199:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 198:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 202:

¹⁰² M. v a n B r u i n e s s e n. Onyedinci yuzyilda kurtler ve dilleri: Kurt lehveleri üzerine Evliya Pelebeinin notları.— “Studia Kurdica”, 1985, №1-3, p. 13-31; Г. С. А с а т р я н. Этюды по иранской этнологии. Ереван, 1998, с. 48-49.

Ռոմիլի ցեղին էր պատկանում XVI դ. քուրդ նշանավոր պատմագիր Շարաֆ-խան Բիթլիսին, որի «Շարաֆ-նամեն» քրդական ցեղերի տեղաբաշխման և ժամանակի պատմության կարևորագույն սկզբնաղբյուր է: Շարաֆ-խանն, անդրադառնալով իր ցեղի ծագմանը, դրում է, թե այն առաջացել է խոյթում մեկ օրվա ընթացքում՝ 24 ցեղերի միավորման հետևանքով և այդ պատճառով, իբր, կոչվել է «ռուզաքի», որը «դարի» (= պարսկերեն) լեզվով նշանակում է «մեկ օր»¹⁰³: Սա, իհարկե, ուշ ժողովրդական ստուգաբանություն է, որպիսին վերագրվել է քրդական այլ ցեղանունների նույնպես:

Բագրատունիների անվանադիր նախնին Բագարատն է, որը մ.թ.ա. II դ. նշանակվեց Արշակունյաց արքաների թագադիր ասպետ, և այդ պաշտոնը հետագայում դարձավ ժառանգական¹⁰⁴: Ինչ վերաբերում է Բագարատ անվանը, ալա այն, ամենայն հավանականությամբ, սկզբնապես եղել է իշխանական տիրոջ, ինչպես և Մամբուն անունը: Մինչ այդ, նշված տոհմը հայտնի էր իրական նախահոր՝ Շամբաթի անվամբ. Բագարատն ինքն էլ կոչվում էր «Շամբատայ Բագարատ»¹⁰⁵: Ըստ ավանդադրույցի՝ Շամբաթը Բուբելոնի արքա Նաբուկոդոնոսորի դերած հրեաների գլխավորներից մեկն էր, որը ընկեցվեց մեր երկրում¹⁰⁶: Շամբաթի պատմականության մասին կարելի է վիճել, սակայն փաստ է, որ Բագրատունիներն, իրոք, նախապես մովսիսական կրոնի հետևորդներ են եղել: Հետագայում նրանք, մեծ դժվարությամբ, «հանձն են առնում – շաբաթ օրերը ձի հեծնել որսի և պատերազմի համար և տղա զավակներին անթլփատ թողնել»¹⁰⁷:

Մովսես խորենացու հաղորդմամբ՝ II դ. նշանավոր զորավար Սմբատ (< Շամբատ) Բագրատունին «բնակություն է հաստատում Տմորիքում [– Կորդրիք]..., որովհետև նա ծերունիության հասակում կին էր առել այդ կողմերի ասորեստանցիներից և նրան շատ սիրում էր»¹⁰⁸: Սմբատը հաստատվում է Ալկի ավանում (այժմ՝ Էլկի): Այստեղից ոչ հեռու գտնվում է պատմական Սմբատաբերդը՝ Շամբատ կամ Շամբատ լեռան (Ջողա լեռ) ստորոտում¹⁰⁹, որն այժմ կոչվում է Ջիլո (4168 մ): Գուցե Բագրատունիների հետ է կապված նաև Շարաֆ-խանի կողմից հիշատակվող Հաքթարիի Աշուտ բերդը¹¹⁰՝ Մեծ Ջաբի ավին, որը, հավանաբար, հետագայում հայտնի էր Աշիթա ան-

¹⁰³ III a p a փ - x a n, IV, 1, c. 403. Պրս. روزه یاکي ruz-e yaki «մեկ օր»:

¹⁰⁴ Սեբեոսը Հիշյալ Բագարատին բնորոշում է որպես «յորդուցն Արամենակայ» (Սեբեոս, Գ, էջ 54)՝ այսինքն Հայկի սերունդներից, այն է՝ Բագրատունյաց տոհմը համարում է բնիկ Հայկական:

¹⁰⁵ Խ ո Ր Ե ն ա ց ի, II, Գ, Ը, էջ 116, 132:

¹⁰⁶ Նույն տեղում, I, ԻԲ, էջ 80: Ըստ խորենացու՝ «մի քանի անխտահեղի մարդիկ ատում են, ըստ իրենց ենթադրության, բայց ոչ ճշմարտության, իբր թե Բագրատունիների թագադիր ցեղը սերում է Հայկից» (Խ ո Ր Ե ն ա ց ի, էջ 83):

¹⁰⁷ Խ ո Ր Ե ն ա ց ի, II, Թ, էջ 136:

¹⁰⁸ Նույն տեղում, II, ԾԳ, էջ 219:

¹⁰⁹ Գ. Բ ա դ ա լ յ ա ն. Վանի էջայեթի..., էջ 29:

¹¹⁰ III a p a փ - x' a n, III, 5, c. 349.

վամբ և համարվում էր լեռնցի նեստորականների ամենամեծ բնակավայրը¹¹¹:

Գ. Բադալյանի կարծիքով՝ Բագրատունիների Շամբատայ տոհմանունը պահպանվել է քրդական շամբո ցեղանվան մեջ¹¹², թեև այդ անցումը, ըստ երևույթին, եղել է միջնորդավորված: Քրդական Շամբոյան (Շամոյան, Շամոանից) իշխանության հիմնադիր Իզզ ադ-դին Շիրը, որը հայկական աղբյուրներում, մասնավորապես՝ Թովմա Մեծոփեցու երկում, անվանված է եզդին Շեր, 1331 թ. արաբատառ արձանագրություն է թողել Վասպուրականի Ռչտունիք գավառում՝ Ռչտունյաց տոհմի իշխանանիստ Ոստանում (այժմ Գավաչ)¹¹³: Ուշագրավ է, որ Իզզ ադ-դինի կինը սերում էր ռոժկի ցեղից¹¹⁴, իսկ ինքը՝ «եզդին՝ յազգէն Սենեքերիմեանց», ինչպես նշում է Թովմա Մեծոփեցին: այդ դրելով նա, հնարավոր է, հասկանում էր Արծրունյաց նախարարական տոհմը, չի բացառվում նաև, որ «Սենեքերիմի տոհմից» ասելով ակնարկվեր շամբո ցեղի ծագումը նեստորական ասորիներին, որոնք բնակվում էին այդ տարածքում:

Շամբո ցեղի անունով Վանի նահանգի հարավային կեսում գտնվող Հաքքարիի «սանջակը» կոչվում էր նաև Շամբո: այս մասին գրում է դեռ Շարաֆ-խանը¹¹⁵: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, Հաքքարիի կենտրոնը Բաշկալա բերդաքաղաքն էր, որը համապատասխանում է Արծրունյաց իշխանական տան Հադամակերտ ոստանին և որը XIX դ. վերջին ուներ 100 տուն հայ, նույնքան տուն թուրք և 150 տուն հրեա բնակիչ¹¹⁶:

Ամենայն հավանականությամբ, Շամբո տեղանունն ունի շատ ավելի հին ծագում, քան թվում է առաջին հայացքից, և կապված է Վանի թագավորության ու Մանա երկրի սահմաններին գտնվող ՍումբուՍուսբու «երկրանվան» հետ, որը տեղագրվում է Ուրմիա լճից հարավ՝ Մեծ Զաբի ստորին հոսանքի շրջանում, և հիշատակվում է ասորեստանյան արքաներ Շամշի-Ադադ V-ի արձանագրության մեջ ու Սարգոն II-ի «Լուվրի աղյուսակում» (մ.թ.ա. 714 թ.)¹¹⁷: Հավանական է, որ նույն երկրամասը I դ. հիշատակված է Սիմբակա ձևով, որը, ըստ Ստրաբոնի, Ատրպատականի թա-

¹¹¹ В. М а е в с к и й. Несториане Ванского вилайета (поездка 1898 года). — «Известия штаба Кавказского военного округа», Тифлис, 1913, № 36, с. 62, 64.

¹¹² Գ. Բ ա դ ա լ յ ա ն, Վանի էյալեթի..., էջ 28:

¹¹³ Ա. Հ. Խ ա չ ա տ ը յ ա ն. Հաքքարի քրդական իշխանության կազմավորման հարցի շուրջ (ժ. Դ դար). — Մերձավոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ. հ. XIII, էջ 134, 138, А. А. Х а ч а т р я н. Корпус арабских надписей Армении (VIII-XVI вв.). Т. I, Ереван, 1987, № 194 (1), с. 123; А. К h а с h а t r i a n. The Kurdish Principality of Hakkariya (14th-15th centuries): Iran & the Caucasus, vol. 7, 2003, p. 37-58.

¹¹⁴ Ա. Հ. Խ ա չ ա տ ը յ ա ն. Նշվ. աշխ. էջ 139, А. А. Х а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 31:

¹¹⁵ III a p a ֆ - х а н, III, 5, с. 349; G. P. B a d g e r. Nestorians and their Rituals. Vol. I, London, 1852, p. 210. Բաշերը բերում է հետևյալ չափածո երկտողը՝ Շամբո գավառի սահմանի վերաբերյալ.

Barī Balāl Dīna!

Kūblē ta herse dīna,

Tahūbē Shamboe u Bahdīnan.

¹¹⁶ ՀՀՇՏԲ. հ. I, էջ 600-601:

¹¹⁷ Н. В. А р у т ю н я н. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 172-173.

O Stone of Balal the Fool!

The Kooblah of the three creeds,

Thou art the limit of Shamboe and Bahdinan.

գավորույթունը նվաճել էր Հայաստանից¹¹⁸: Ն. Աղունցի կարծիքով Բագրատունյաց տոհմի անունը հատկապես նրանց ասպետ տիրոջս, ցույց է տալիս, որ այդ տոհմը սկիզբ է առել հայ-իրանական էթնիկ հողի վրա, և նրա նախնական հայրենիքը, ըստ երևույթին, գտնվում էր Ատրպատականի սահմանամերձ շրջանում¹¹⁹:

Հետաքրքիր է, որ քրդական շամբո ցեղի ամենահոսալի դաշնակիցները նեստորական ասորիներն էին՝ «անհավատ քրիստոնյա ասուրիները», որոնք կոչվում էին ջելոներ կամ ջուլոներ¹²⁰ (հմտ. Ջողա լեռնանունը): Այս ցեղանունը, իրականում, գալիս է նեստորական բնակչության հինգ հիմնական աշիրեթներից մեկի անվանումից, որոնք կոչվում էին Տիար (Թիար), Տիսում (Թհուբ), Ջելու, Դեզ և Բագ. Ջելու ցեղի տարածքը համապատասխանում էր Կորճայքի Ջահուկ գավառին, այս աշիրեթին պատկանող նեստորականները բնակվում էին Բագ, Դեզ և Օրամար աշիրեթների միջև¹²¹: Քրդական Օրամար աշիրեթը մոտավորապես զբաղեցնում էր Կորճայքի Մոթողանք (Մողթանք) գավառի տարածքը՝ վաղմիջնադարյան «Մարաց ամուր աշխարհի» հարևանությամբ: Ըստ երևույթին, Մողթանք գավառանունը պահպանվել է ասորաբնակ Մախթա գյուղի անվան մեջ, որը գտնվում էր Արանդուզ և Վաղաթ գյուղերի միջև¹²²: Նեստորական ամենամեծաթիվ աշիրեթը, սակայն, Տիարն էր, որի մեղիք Իսմայիլի նստավայրը կոչվում էր Յամբա (? Ծամբա) կամ Չամբա¹²³. այս տեղանվան արմատը, ամենայն հավանականությամբ, նույնպես Բագրատունիների Ծամբասայ տոհմանվան, ՍուլբուկՍուլբուկ կամ Սիմբակա տեղանունների արձագանք է:

Ըստ էվիլիյա Ջելբեու ջուլոների ցեղի հանգերձանքը նման էր քրդականին. «կոնակներին կրում են քրդական վահան, ձեռքներին կոպալ կոչված կոշտ գավազաններ են բռնում, գլխներին գուլնգգուլն փաթթոցներ են կապում: Սրանք իրենց ականջները ծակում են դանակով, արյուն հոսեցնում և այդ ծակերից աքաղաղի, սիրամարգի և բազեի փետուրներ են անցկացնում», իսկ «չատերը ականջներին օղեր են կրում»¹²⁴: Ականջներին օղեր կրելու նույնպիսի սովորույթ վկայված էր դեռևս II դ., երբ հայոց արքան Մարացոց իշխան Արգամին տալիս է երկրորդական գահն ու իրավունք՝ երկու ականջներին գինդեր կրելու¹²⁵: XIX դ. վերջին նեստորական Թհուբ աշիրեթի մեղիք Բաբոն նկարագրվում է երկար՝ երկու հյուսիս ունեցող ծամբրով, սպիտակ կոնաձև փափախով, որը ճակատի մոտ ուներ չթե գունավոր փաթթոց¹²⁶:

¹¹⁸ С т р а б о н, XI, 13, 2, с. 493.

¹¹⁹ Ն. Աղունցի. Հայոց նախարարութեան ծագումը. Պէրուս, 1949, էջ 41:

¹²⁰ III a p a φ - x a n, II, 2, с. 156, P ա ֆ ֆ ի. Երկրի ժողովածու. հ. VIII, Երևան, 1957, էջ 424-427:

¹²¹ В. М а е в с к и й. Ванский вилайет, с. 225-226, ՀՀՇՏՏ. հ. II, էջ 396:

¹²² В. М а е в с к и й. Несториане Ванского вилайета..., с. 54.

¹²³ Նույն տեղում, էջ 60, 70, 74, ՀՀՇՏՏ. հ. IV, էջ 203, հ. V, էջ 154:

¹²⁴ Չ ե լ ե բ ի, էջ 243:

¹²⁵ Խ ո ռ ե ն ա ց ի, II, Խէ, էջ 206:

¹²⁶ В. М а е в с к и й. Несториане Ванского вилайета..., с. 58.

Ջուլուները բնակվում էին գլխավորապես Գավառ և Ջուլամեր(ի)կ գավառներում՝ Ջլմար կենտրոնով։ Ջուլամերկը հայտնի էր նաև Ջիլոստան կամ Ասիայի Չեռնոգորիա անվամբ. քրիստոնյա ջուլուների թիվը հասնում էր 50-70 հազարի, և, փաստորեն, նրանք կիսանկախ էին¹²⁷։ Լեռնական նեստորականներն իրենց կացութաձևով ոչնչով չէին տարբերվում քրդերից. այսպես, օրինակ, տիրացիներն իրենց հին հաշիվները ունեին Արտոշի քրդերի հետ, որոնցից նախիրներ և հոտեր էին գողանում¹²⁸։

Փամանակին գոյութուն ունեցած նեստորական այս կիսանկախ իշխանութան վարչական կենտրոնի՝ Ջուլամերկ կամ Ջլմար բնակավայրի անվանումը հնում առնչվել է առասպելական Աժդահակի սերնդին. ըստ Թովմա Արծրունու հաղորդած մի հին ավանդազրույցի՝ Կործայքի Փոքր Աղբակ գավառի Ջլմար և Սրինգ ամրոցներում իշխում էր մարաց վերջին թագավոր Աժդահակի զարմից մի կին՝ Ջայլամար, որի անունով էր կոչվում ամրոցը. Ջայլամարի դուստր Անուշին կնության առավ Սահակ Արծրունին՝ միաժամանակ նաև տիրանալով կնոջ ընդարձակ կալվածքներին¹²⁹։ Ինչպես երևում է Արծրունու այս տեղեկությունից, Ջահուկ գավառն իր Ջլմար կենտրոնով այդ փամանակ մտնում էր Փոքր Աղբակի մեջ։

Հետագայում ջուլու կոչվող լեռնական ասորիները, որոնց սխալմամբ անվանել են նաև «քրիստոնյա քրդեր»¹³⁰, նվաճվեցին Հաքքարիի քրդական իշխանութան կողմից, որի կենտրոնը գարձավ հենց Ջլմար բերդաքաղաքը։ Հաքքարի տեղանունն առաջին անգամ հիշատակվում է կեղծ-Վակիդիի երկում (IX դ.), և դրա ծագումը ենթադրվում է Ագարակ լեռների անունից, որոնք գտնվում են Ջազրոշի լեռնահամակարգում, Ջուլամերկից (Ջլմարից) հյուսիս-արևելք, այստեղ էր գտնվում Կործայքի Ագարակ (Ջահուկ) բերդը¹³¹։

Սկզբնապես Հաքքարիի իշխանութունն ընդգրկում էր շատ ավելի նեղ տարածք, Բ. Հ. Հարությունյանի տեղադրություն համաձայն այն ներառում էր սոսկ Ջահուկին հարևան Այգառք գավառը, որը հենց Հաքքարի անվան բնիկ ձևն է (Այգառք > (H)aykar-i > Hakkari)¹³²։ Հայ մատենագրության մեջ վկայված է այս հնչյունական անցման միջանկյալ տարբերակը, ըստ որի՝ Հաքքարիի իշխանը կոչված է «սլարոնն Հայքարայ, որ էր յոյժ ինամակալու ազգիս քրիստոնէից, առավել քան զնախնիքն իւր»¹³³։ Այս բնորոշումը միանգամայն համապատասխանում է նեստորական ասո-

¹²⁷ Հ. Մ. Պոդոնյան. Վասպուրականի սլամոթյունից (1850-1900). Երևան, 1988, էջ 86, Գ. Սրվանձտյանց. Նշվ. աշխ., էջ 401: Թուրքիայի ասորիների մասին ընդհանրապես տես Վ. Բոլորանյի. Ասորիները և Թուրքիան. «Իրան-նամէ», 1995, №2 (12), էջ 27-29:

¹²⁸ В. Маевский. Несториане Ванского вилайета..., с. 11.

¹²⁹ Թովմա Արծրունի և Անանու. Պատմություն Արծրունյաց տան. Երևան, 1978, I, Ը. էջ 75-76:

¹³⁰ Մ. վան Բրոյնեսեն. Կրոնը Քուրդիստանում (մաս առաջին). «Իրան-նամէ», 1993, №1, էջ 20:

¹³¹ Գ. Բագալյան. Վանի վիլայեթ. բնակչության ազգային կազմը Առաջին աշխարհամարտի նախօրեին. «Իրան-նամէ», 1993, №1, էջ 8; ՀՀՇՏԲ, հ. I, էջ 20:

¹³² Գ. Բագալյան. Վանի էյալեթի..., էջ 28-29:

¹³³ Ա. Խաչատրյան. Նշվ. աշխ., էջ 141:

րիններին, որոնց կենտրոնական և ամենամեծաթիվ աշիրեթը՝ Տիարը, դտնվում էր հենց Այգառք գավառի տարածքում¹³⁴:

Ավելի ուշ Հաքքարիի կամ Զուլամերկի հյուլքյումեթը, դուրս գալով Այգառքի (կամ Ագարակի¹³⁵) սահմաններից և ներառնելով Կորճայքի ու Վասսուլերականի գավառները, դարձավ հարավային Հայաստանի ամենահզոր քրդական իշխանությունը: Թերևս, հենց Կորճայքի կենտրոնական գավառները (այն է՝ Տմորիքը) նվաճելիս՝ Հաքքարիի (Այգառքի) տիրակալներն ընդունեցին շամբո տոհմանունը¹³⁵:

Ըստ Շարաֆ-խանի՝ շամբո ցեղանունը բացատրվում է «շաբաթ» բառով: Շաբաթ օրը, որը դեռ Բագրատունիների համար հանդստյան օր էր համարվում, Հաքքարիի «անհավատները» հանգստանում և պարեն էին կրում Դիզ ամրոց. ավանդազրույցի համաձայն՝ Հաքքարիի քուրդ տիրակալները, օգտվելով այդ սովորույթից, անսպասելի հարձակվում ու գրավում են ամրոցը: Շարաֆ-խանի կարծիքով՝ այդ է պատճառը, որ նրանք կոչվեցին շամբո՝ շաբաթ օրվա անունով¹³⁶: Այստեղ, ակնհայտորեն, շաբաթ սուրբ օրվա մասին պատկերացումները միահյուսված են ուղիղորդական ավանդույթյան պատումի հետ¹³⁷:

Արտաշեսեան նախարարական տունը հիշատակվում է հայոց «Զորանամակում»՝ Հարավային դուռն խմբի մեջ¹³⁸: Այս տոհմի անունով էր կոչվում Վանա լճի ափին գտնվող Վասսուլերականի Արտաշիսյան գավառը՝ Արտամետ քաղաքով, այդ գավառանունից է, ամենայն հավանականությամբ, ծագում քրդական Արտուշի ցեղանունը:

Այժմ Հաքքարիի քրդերը պատկանում են մեծ մասամբ հարսուշի (հարսուշի) խոչոր ցեղամիավորմանը, որը հայտնի է նաև արսուշի անվամբ: Այս միավորման անդամների մեջ լայնորեն տարածված էին իրենց հայկական ծագման մասին պատկերացումները¹³⁹: Թերևս, հայկական ծագումն էր պատճառը, որ ընդհանրապես Վանի նահանգի քրդական ցեղերը ունեին նույն կենցաղը, ինչ հայերը, կառուցում էին նույնպիսի բնակավայրեր՝ այն տարբերությամբ, որ քրդերի տներն ավելի փոքր էին, և հյուրերի համար նախատեսված սենյակներն ավելի անհարմար¹⁴⁰:

Արտուշի ցեղամիավորման բաղկացուցիչ հատվածներից էին էզդիխան, ալան, շիրան, ալեան և այլ ցեղեր. վերջին երկուսը կազմում էին Արտուշի միավորման կորիզը և բնակվում էին նորդուզ գավառակում¹⁴¹, որը համապատասխանում է Մեծ Հայքի Անձավացիք գավառին՝ Արտաշիսյան գավառից ոչ հեռու: Բացի այդ, արսուշի անունով ցեղ հայտնի էր նաև Իրա-

¹³⁴ ՀՀՇՏՏ. հ. II, էջ 449:

¹³⁵ Գ. Բ ա դ ա լ յ ա ն. Վանի էյալեթի..., էջ 28:

¹³⁶ III a p a ֆ - x a ն, II, 2, с. 156-157.

¹³⁷ Մի ուրիշ տեղ Շարաֆ-խանը նույն տոհմը կոչում է Շամո և նրան սերած համարում մին Շամսադդիինից (III a p a ֆ - x a ն, III, 5, с. 274):

¹³⁸ Ն. Ա դ ո ն ց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 283:

¹³⁹ Գ. Բ ա դ ա լ յ ա ն. Վանի էյալեթի..., էջ 29:

¹⁴⁰ В. М а е в с к и й. Ванский вилайет, с. 203.

¹⁴¹ Նույն տեղում, էջ 224-225:

քում, այն հարում էր Ջաֆ ցեղամիավորմանը: Գ. Սրվանձտյանցն այս ցեղը հիշատակում է Հաքքարիում՝ շկակ ցեղի հետ, և կոչում է արտոչցիք¹⁴²:

Ինչպես ընդունված է, Արտուշ անունը համարվում է Արտաշես անձնանվան փաղաքշական տարբերակը, և նշված ցեղանունը միանգամայն կարող էր ծագել հենց Վասպուրականի Արտաշեսեան դավառի անվանումից: Վերջինս այսպես է կոչվել Մեծ Հայքի Արտաշես արքայի պատվին, որը բուռն դործունեություն էր ծավալել Վասպուրականի և Կործայքի գավառներում. նա էր, որ Ջայլամար իշխանուհու տիրույթները հանձնելով Արծրունիներին՝ այդտեղ կառուցում է Հերակլեսի (– Վահագնի) և Դիոնիսի (– Միհրի?) մեհյանները, «որի շնորհիվ կարողացավ երկիրը պահել շեն ու բաղամամարդ»: Սակայն արդեն այդ ժամանակներում լեռնական քոչվոր ցեղերը խռովում էին ժողովրդի անդորրը. այսպես, օրինակ, Թովմա Արծրունու վկայությունը՝ «Հաշտյանք դավառից ինչ-որ ելուզակներ էին հաստատվել լեռան վրա», որոնց հետ բախման արդյունքում սպանվեց Աշոտ Արծրունին¹⁴³:

XX դ. սկզբին Ջուլամերկի շրջանում էր գտնվում Գամիլ գյուղը, որն ուներ արտուշի ցեղին պատկանող 28 տուն քուրդ բնակիչ¹⁴⁴:

Սասնո տան իշխանական տիրույթները դտնվել են Աղձնիք նահանգի Սանասունք գավառում: Այս նախարարական տոհմի հիմնադիրներն, ըստ Պատմահոր, Ասորեստանի Սենեքերիմ (Սինախերիբ) արքայի (704-681) որդիներ Ադրամելեքն ու Սանասարն էին, որոնց մասին պատմվում է նաև Աստվածաշնչում¹⁴⁵: Սանասար կամ Սարասար անունը, հավանաբար, սկզբնապես նույնպես իշխանական տիտղոս (կոչում) է եղել՝ Մամուրն և Բաղարատ անունների նման: Բացի նշված Սանասարից, մ.թ.ա. II դ.՝ Մեծ Հայքի Վաղարշակ արքայի օրոք ևս հայտնի էր Սասունի իշխան Շարաշանը, իսկ 648 թ., Շարաֆ-խանի հաղորդած տեղեկությունների համաձայն, «Մուշի և Սասունի տիրակալն էր Սանասար անունով անհավատը»¹⁴⁶:

Ըստ ավանդության՝ Ադրամելեք և Սանասար եղբայրներից մեկից սերել են Աղձնյաք բլեշխները, իսկ մյուսից՝ Գնունիներն ու Արծրունիները: Ավելի ուշ, ժողովուրդը դիցաբանական մտածողությունը՝ նշված եղբայրներին համարել է երկվորյակներ և վերագրել նմանահունչ անուններ, ավելի ճիշտ՝ կոնկրետ պատմական իրադարձությունը տարրալուծվել է հայոց էպոսի առասպելաբանական կաղապարում: «Սասնա ծռեր» դիցավեպի տարբերակների մեծ մասում Սանասարն ու Բաղդասարը Բաղդադի արաբ խալիֆի խորթ զավակներն են, ընդ որում երկրորդը Բաղդադի անվանադիրն է և որոշ պատմիչների համաձայն՝ դնում բնակվում է Միջագետքում:

Ուշադրով է, որ քրդական գուգահեռ ավանդազրույցում նույնպես եղբայրներից մեկը Միջագետքից է՝ Սասանյան դահատոհմից. այստեղ էական

¹⁴² Գ. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 400:

¹⁴³ Թովմա Արծրունի և Անանուն, I, Ը, էջ 76:

¹⁴⁴ ՀՀԾՏԲ. Հ. I, էջ 777:

¹⁴⁵ Խորենացի, I, ԻԳ, էջ 83-85, Թադ. Դ, գլ. ԻԹ, 36-37, Ես. գլ. ԼԷ, 37-38:

¹⁴⁶ Խորենացի, II, Ը, էջ 131, III а р а ф - х а н, IV, с. 386.

նր ոչ թե վարչաքաղաքական բնորոշումներն են, որոնք ակնհայտորեն մտացածին են, այլ Միջադեպի՝ որպես պատմաաշխարհագրական միջավայրի ընկալումը: Համաձայն Շարաֆ-խանի՝ Սասունի քրդական ցեղամիավորման իշխանները կոչվում են Հազո և սերում են երկու եղբայրներից (Վլդադդին ու Զիյադդին), որոնք անջատվելով ուժերից՝ գրավել են Սասնա բերդը¹⁴⁷: Ինչպես իրավամբ նկատել են Ս. Հարությունյանը և Հ. Բարթիկյանը, քրդական այս ավանդազրույցում ակներև է տոհմածին երկու եղբայրների մասին պատկերացման կնիքը և, մասնավորապես, Սասնա տան հիմնադիրների վերաբերյալ հայկական զրույցի ազդեցությունը¹⁴⁸:

Թերևս, Շարաֆ-խանի հաղորդած ավանդազրույցի օգնությամբ կարելի է բացատրել Սասունի Ռշկնին և Ռշնիկ գյուղանունների ծագումը, որոնք, հավանաբար, առնչվում են ռոշկի և (վ)ռշիկ ցեղանուններին: Հետաքրքիր է, որ ըստ «Սասնա ծռերի»՝ Սանասարն ու Բաղդասարը սերում են իրենց պապ Գադիկի Կապույտ բերդից, որը դիցավեպի որոշ պատումներում նույնանուն է Ռշտունիքի Կապուտկող բերդի հետ, բացի այդ՝ Ռշտունիքում է տեղի ունենում Գադիկ թագավորի և Բաղդադի Նալիֆի զորքերի հանդիպումը, ինչպես և երկվորյակների մայր Ծովինարի հղիացումը Կաթնով Աղբյուրից¹⁴⁹:

Քրդական Հազոյի միավորման ցեղերից մեկը՝ սուսանին (*սասունի), ներկայումս բնակվում է Իրանի տարածքում: Նշենք, որ ինչպես Սասունի Հայերը միշտ հռչակված էին իրենց անվեհեր խիզախությամբ, այնպես էլ Հազո(յի) քրդերը, ըստ Շարաֆ-խանի, «ամենաքաջն ու արին էին Քրդստանի իշխանների մեջ»¹⁵⁰: Հավանաբար այս ցեղն է Ա. Տևկանցը հիշատակում Սասոնցի անվամբ¹⁵¹:

Այսպիսով, վերը համառոտակի ներկայացված իշխանական տները (Մանդակունյաց, Ալկունյաց, Մամիկոնյան, Պալունյաց, Ռշտունյաց, Բագրատունյաց, Արտաշիսյան, Սասնա) Մեծ Հայքում ավել կամ պակաս չափով նշանակալից կշիռ ունեցող ազդատոհմերից էին, և զարմանալի կլիներ, եթե նրանք անհետ վերացած լինեին իրենց նախկին տիրապետություններից: Արանից, անկասկած, չի հետևում, թե թվարկված բոլոր դեպքերում կարելի է ծագումնաբանական ընդհանրություններ տեսնել ներկա և նախկին ցեղային իրադրությունների միջև. ամենևին ոչ: Պարզապես ուշադրաբար այն է, թե ինչպիսի կենսունակությունն են դրսևորել հին ցեղանուններն ու տոհմանունները՝ անգամ տարածաշրջանի էթնիկ, վարչական և կրոնամշակութային իրազրույթյան փոփոխությունների պայմաններում:

¹⁴⁷ III a p a փ - x a H, III, 3, c. 247.

¹⁴⁸ Ս. Բ. Հ ա ռ ու թ յ ու ն յ ա ն, Հ. Մ. Բ ա ռ թ ի կ յ ա ն. «Սասնա ծռերի» արձագանքները «Շարաֆ-նամեում». - ՊԲՀ, 1975, №2, էջ 96-97:

¹⁴⁹ Սասունցի Դավիթ (աշխատասիրություններ Ս. Բ. Հարությունյանի). Երևան, 1981, էջ 3, 8:

¹⁵⁰ III a p a փ - x a H, III, 3, c. 246.

¹⁵¹ Ա. Տ և կ ա ն ց. նշվ. աշխ., էջ 70:

СЛЕДЫ АРМЯНСКИХ КНЯЖЕСКИХ ДОМОВ В ЮГО-ЗАПАДНОЙ АРМЕНИИ

(К вопросу о происхождении некоторых курдских племен и этнонимов)

TORK DALALYAN

Р е з ю м е

В статье коротко представлены некоторые княжеские ("нахарарские") дома Великой Армении (II в. до н.э. — V в. н.э.) — роды Мандакуни, Слкуни, Мамиконян, Гялуни, Рштуни, Багратуни, Арташесян, Сасна. Приводятся сведения клинописных, историографических и генеалогических, а также лингвистических источников, указывающих на происхождение данных княжеских родов, большая часть которых, как видно, генетически связана с древними племенами Армянского нагорья и соседних регионов. Примечательно, что как эти этнонимы и наименования нахарарских фамилий, так и мифологические представления и традиции, связанные с ними, сохранялись до наших дней в виде топонимов и племенных названий не только курдских, но и айсорских и зазайских аширетов. Сказанное, конечно, вовсе не означает, что можно провести прямые генеалогические линии между нынешней и средневековой племенными картинами в регионе. Просто интересно, какую живучесть проявляют этнонимы и наименования княжеских фамилий даже после изменения этно-конфессиональной, политико-административной и культурной ситуации в регионе.

THE REMAINS OF THE ARMENIAN PRINCELY HOMES IN SOUTH-WESTERN ARMENIA

(On the origin of some Kurdish ethnic names and tribes)

TORK DALALYAN

S u m m a r y

Under the eight points of the paper there are shortly presented corresponding princely ('naxarar') homes of Great Armenia (the 2nd c. B.C. — the 5th c.) — the families Mandakuni, Sylkuni, Mamikonyan, Paluni, Ryshtuni, Bagratuni, Artashisyan, Sasna. It is discussed the information received from cuneiform, historical and genealogical, as well as linguistic sources, concerning the origin of these princely families, much of which, as one can see, is genetically connected with the ancient tribes of Armenian plateau and the neighboring areas. It is noteworthy, that either these ethnonyms and the names of the 'naxarar' families or mythological ideas and traditions connected with them, are preserved to our time as toponyms and ethnic names of the Kurdish (as well as the Aysori and the Zaza) ashirets. The aforesaid, of course, does not mean that one can lay out genealogic lines between present-day and medieval tribal pictures in the region. We can only stress the tenacity and vitality of the ethnic and family names, even after the change of the ethnic-confessional, political-administrative and cultural situations in the region.